МИНИСТЕРСТВО ТЕРРИТОРИАЛЬНОГО УПРАВЛЕНИЯ И ИНФРАСТРУКТУР РЕСПУБЛИКИ АРМЕНИЯ
ЗАО "ВЫСОКОВОЛЬТНЫЕ ЭЛЕКТРОСЕТИ"
ГЕНЕРАЛЬНЫЙ ДИРЕКТОР

0084 Армения, Ереван, ул. З. Андраника 1
Тел. 060 38 00 01

MINISTRY OF TERRITORIAL ADMINISTRATION AND INFRASTRUCTURES OF THE REPUBLIC OF ARMENIA
"HIGH VOLTAGE ELECTRIC NETWORKS" CJSC
GENERAL DIRECTOR

0084 Armenia, Z. Andranik st.1, Yerevan
Tel: 060 38 00 01

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ
ԵՎ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
«ԲԱՐՁՐԱՎՈԼՏ ԷԼԵԿՏՐԱՑԱՆՑԵՐ» ՓԲԸ
ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆ
0084, Հայաստան, Երևան, Զ. Անդրանիկի 1,
Հեռ. 060 38 00 01
Էլ. հասցե: hven@hven.am, www.hven.am

No._____

«20» ____10____ 2023թ.

«ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» սահմանափակ
պատասխանատվությամբ ընկերությանը

ԾԱՆՈՒՑՈՒՄ

/Պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ/

«Բարձրավոլտ էլեկտրացանցեր» ՓԲ ընկերության /այսուհետ՝ Պատվիրատու/ և «ԱՐԽԻ ԹՈՒԼՍ» ՍՊ ընկերության /այսուհետ՝ Կատարող/ միջև 2023 թվականի հունիսի 14-ին կնքվել է ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/16 ծածկագրով տեսադիտարկման համակարգերի ներդրման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության մատուցման գնման պայմանագիր /այսուհետ՝ Պայմանագիր/, որի 1.1 կետի համաձայն՝ Կատարողը պարտավորվել է նշված Պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում՝ մինչև 14.07.2023թ., կատարել Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցով նախատեսված Պատվիրատուի կողմից ներկայացվող տեսադիտարկման համակարգերի ներդրման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայությունը /այսուհետ՝ Ծառայություն/, իսկ Պատվիրատուն պարտավորվել է ընդունել մատուցված Ծառայությունը և վճարել դրա դիմաց: Չնայած համատեղ բազմաթիվ քննարկումներին՝ Կատարողը 27.07.2023թ.-ին Պատվիրատուին է ներկայացրել Պայմանագրի Հավելված 1-ի տեխնիկական առաջադրանքի պահանջներին չհամապատասխանող նախագծանախահաշվային փաստաթղթերի փաթեթ, որից հետո

կրկին տեղի է ունեցել համատեղ քննարկում՝ հայտնաբերված թերությունները շատ սեղմ ժամկետներում շտկելու և Պատվիրատուին փաթեթը վերջնական տեսքով ներկայացնելու նպատակով: Այնուհանդերձ ծառայության մատուցումը կրկին ձգձգվել է, ինչի պատճառով Պատվիրատուն գնումների PPCM համակարգի միջոցով Կատարողին է ներկայացրել բացասական եզրակացություն՝ ի պատասխան Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքների հանձնման-ընդունման արձանագրությանը:

01.10.2023թ. և 04.10.2023թ. Կատարողը Պատվիրատուին է ներկայացրել շահագործման ծառայության «Արևմտյան» տեղամասի «Գյումրի-2» և «Հյուսիսարևելյան» տեղամասի «Վանաձոր-1» ենթակայանների նախագծերի թղթային մեկական տարբերակ հայերեն լեզվով (նախահաշիվները չեն ներկայացվել), իսկ էլեկտրոնային տարբերակներից միայն «Գյումրի-2» ենթակայանի նախագիծը, այն էլ առկա բազմաթիվ թերություններով:

Պայմանագրի 2.1.3 կետի համաձայն՝ Պատվիրատուն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է Պայմանագիրը: Կատարողի կողմից Պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Կատարողի կողմից չեն կատարվել Պայմանագրով նախատեսված պարտավորությունները, Պատվիրատուն, ղեկավարվելով Պայմանագրի 2.1.3 կետով, միակողմանի լուծում է Կատարողի հետ 2023 թվականի հունիսի 14-ին կնքված ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/16 ծածկագրով Պայմանագիրը:Միաժամանակ տեղեկացնում եմ, որ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու դեպքում, Պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված որոշման հիման վրա լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Ընդ որում սույն կետում նշված որոշումը Պատվիրատուի ղեկավարը կայացնում է գնման ընթացակարգը չկայացած հայտարարվելու կամ կնքված Պայմանագրի վերաբերյալ հայտարարությունը հրապարակելու կամ Պայմանագիրը միակողմանի լուծելու մասին հայտարարությունը (ծանուցումը) հրապարակելու օրվան հաջորդող տասներորդ օրը:

Որոշումը կայացվելուն հաջորդող օրը այն գրավոր տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգերորդ օրը, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգերորդ օրը, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել:

Ընդ որում, եթե՝

- սույն կետով նախատեսված՝ լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ Պայմանագիրը կնքած անձը վճարել է հայտի, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարը, ապա Պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին.
- մասնակցի կամ Պայմանագիրը կնքած անձի կողմից հայտի, Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարի վճարումն իրականացվել է լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալուց հետո, բայց ոչ ուշ, քան մասնակցին կամ Պայմանագիր կնքած անձին ցուցակում ներառելու վերջնաժամկետը լրանալու օրը, ապա Պատվիրատուն դրա մասին գրավոր տեղեկացնում է լիազորված մարմին, որի հիման վրա մասնակիցը չի ներառվում ցուցակում:

Հետևաբար՝ Պատվիրատուն.

1. Միակողմանի լուծում է ԲԷՑ-ԳՀԾՁԲ-23/16 ծածկագրով տեսադիտարկման համակարգերի ներդրման նպատակով նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման խորհրդատվական ծառայության մատուցման գնման Պայմանագիրը
2. Կատարողի կողմից Պայմանագրի և (կամ) որակավորման ապահովման գումարների չվճարման դեպքում գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը ներկայացնում է լիազորված մարմին:

ԳԼԽԱՎՈՐ ՏՆՕՐԵՆԻ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ ԴԱՎԻԹ ՄԻՐԶՈՅԱՆ